

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն

Գեղարքունիքի մարզ Ճամբարակ համայնքի Արտանիշ գյուղի արհեստագործական
տարածքում նախատեսվող հանգստի գոտի-առողջարանային համալիրի
վերակառուցման

Պատվիրատու՝

<<Արարկիր բժշկական համալիր երեխաների
և դեռահասների առողջության ինստիտուտ>> ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	4
1.2	Հապավումներ	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը	9
1.5	Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծ	14
1.6	Զրամատակարարում, կոյուղի.....	15
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ		15
1.6.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....</i>	16
1.6.2	<i>Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը</i>	16
1.7	<i>Շահագործման փուլ.....</i>	17
1.7.1	<i>Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ.....</i>	17
1.7.2	<i>Ոռոգման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը.....</i>	18
1.7.3	<i>Մաքրման կայան.....</i>	18
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ` ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	20
2.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական	20
նկարագիրը և լանդշաֆտը		20
2.2	Հատուկ պահպանվող տարածքներ.....	20
2.3	Մթնոլորտային օդ.....	21
2.4	Զրագրություն.....	22
2.4.1	Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	23
2.4.2	Մակերևութային ջրերի որակ	23
2.4.3	Ստորերկրյա քաղցրահամ ջրեր.....	25
2.4.4	Սևանա լիճ.....	27
2.5	Հողային ռեսուրսներ.....	32
2.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	32
2.6.1	Ջերմաստիճանը	32
2.6.2	Խոնավությունը.....	33
2.6.3	Մթնոլորտային տեղումները	33
2.6.4	Քամի.....	34
2.6.5	Արեգակնային ճառագայթումը	34
2.6.6	Արևափայլի տևողությունը.....	35
2.6.7	Անարև օրերի քանակը.....	35
2.6.8	Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ.....	35
2.7	Կենսաբազմազանություն	36
2.7.1	Բուսական աշխարհ.....	36
2.7.2	Կենդանական աշխարհ	40
2.8	Պատմամշակութային և բնության հուշարձանները.....	43
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	48
3.1	Ռիսկերի գնահատում	48
3.2	Արտանետումների աղբյուրները.....	48
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	48
3.3.1	<i>Մթնոլորտային օդ.....</i>	48
3.3.2	<i>Զրային ռեսուրսներ</i>	48
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ.....</i>	49
3.3.4	<i>Թափոնների կառավարում</i>	50
3.3.5	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....</i>	51

3.3.6	<i>Աղմուկ</i>	53
3.3.7	<i>Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր</i>	54
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	55
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	56
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	60
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	58

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն
- 1.2 Ձեռնարկող՝

<<Արաբկիր բժշկական համալիր երեխաների
և դեռահասների առողջության
ինստիտուտ>> ՍՊԸ

- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝
- 1.4 Ձեռնարկողի փաստացի հասցեն՝
- 1.5 Նախատեսվող գործունեության
վարչական տարածքը՝

Ք.Երևան, Մամիկոնյանց 30
Ք.Երևան, Մամիկոնյանց 30
Գեղարքունիքի մարզ, Արտանիշ համայնք

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախատեսվում է Արտանիշ գյուղի ափամերձ տարածքում գտնվող հանդստի գոտի-առողջարանային համալիրի վերակառուցման աշխատանքներ;

Նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կազմակերպել ժամակակից լուծումներով հանգստի գոտի:

Համաձայն 2023թ. մայիսի 3-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ կետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված ել սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու ել ապրանքների արտահանման ել

(կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին»>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,

13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-26, 11.11.1998 թ.);

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (N71-Ն, 29.01.2010թ.),

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (N72-Ն, 29.01.2010թ.),

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին»>> N 1059-Ա որոշումը,

23. ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781 որոշումը,

24. ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 08-ի N 108-Ն որոշումը:

25. «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և համաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի հրամանը:

26. ՀՀ կառավարության որոշումը «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունները հաստատելու մասին (N 927-Ն, 30.05.2002թ.),

27. ՀՀ կառավարության որոշումը «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին (N 205-Ն, 18.01.2007թ.):

28. «ՀՀ Անտառային օրենսգիրք» 2005թ.,

29. «ՀՀ օրենքը բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» 2006թ.,

30. «ՀՀ օրենքը Սևանա լճի մասին» 2001թ.

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախագիծը կատարվել է «Արաբկիր» բժշկական համալիրի-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ պատվերով:

Նախագծի փոփոխություններն ու լրամշակումը կատարվել է հիմնվելով 2014թ. «ՆԵԼԱՆԴ» ՍՊԸ (լիցենզիա N14893) կատարված սույն վերնագրով նախագծի վրա: Այդ պատճառով նախագծում ներառվել են միայն փոփոխություններին վերաբերող գծագրերը: Պատվիրատուի առաջադրանքով կատարվել են որոշակի փոփոխություններ. մասնավորապես.

1. Նախատեսվում է տեղադրել թեթև կոնստրուկցիաներով օժանդակ շինություն հանգստի գոտու տարբեր ծառայությունների կարիքների համար:

2. Լճափին լրացուցիչ տարածք է առանձնացվել մարդկանց հանգիստն ավելի էֆեկտիվ կազմակերպելու համար: Լողափին կից նախատեսվում են տեղադրել բար, բացօթյա սրճարան, պարահրապարակ, բիոզուգարաններ, լողախցեր, հանդերձարաններ և զրուցարաններ: Բարը, որը սպասարկելու է բացօթյա սրճարանը և պարահրապարակը տեղադրվելու են մետաղական կոնստրուկցիաներով հավաքվող և մշակված տախտակով իրականացված հարթակի վրա: Վերը նշված բոլոր շինությունները իրականացվելու են բացառապես թեթև կոնստրուկցիաներով: Բիոզուգարանները, լողախցերը և հանդերձարանները նախօրոք են պատրաստվում մետաղական կոնստրուկցիաներով և բերվելու են տեղադրվեն ներկված վիճակում:

3. Լողափից դեպի հյուսիս անտառային տարածքի մեջ գոյություն ունեցող բացատներում նույնպես նախատեսվում է տեղադրել թեթև կոնստրուկցիաներով հավաքվող զրուցարաններ:

4. Որոշակի փոփոխություններ են արվել տարածքի բարեկարգման մեջ: Մասնավորապես վերջնական տեսքի են եկել տարածքի արտաքին լուսավորության կետերը, ավելացվել են ավտոկայանատեղերի քանակը, նախատեսվել է կանաչ գոտու հատվածում ունենալ մանկական խաղահրապարակ և ճամպարհին կից նիշա աղբի կուտակման և աղբահանման համար: Նախագծվող շինությունների տանիքներից անձրևաջրերի հեռացումը իրականացվելու է ազատ թափման միջոցով:

Հանգստացողների համար լողափը կկահավորվի համաձայն կառավարության 18.12.2008 թ. N 1563-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերի, որի արդյունքում կիրականացվի՝

1) գործող սանիտարական կանոններին և նորմերին լողափի ջրի որակի և տարածքի սանիտարական վիճակի համապատասխանության ապահովում.

2) դեպի ջուր տանող հարմար, անվտանգ մոտեցումների կազմակերպում.

3) ջրի հատակի ռելիեֆի անվտանգության ապահովում (փոսերի, սուր առարկաների, ջրային բույսերի և այլնի բացակայություն).

4) բարենպաստ հիդրոլոգիական ռեժիմով (ջրապտույտների՝ 0,5 մ/վրկ ավելի հոսանքների բացակայություն) լողալու գոտու ջրային սահմանի, ինչպես նաև ջրային տրանսպորտի և սպորտային ինքնաշարժ միջոցների՝ դեպի ցամաք մուտքերի տարանջատում տարբերիչ նշաններով.

5) առանց փրկարարական և բուժապասարկման ծառայությունների լողափերի շահագործման բացառում.

6) լողափի գոտու տարածքում տրանսպորտային միջոցների (բացառությամբ փրկարարական ու շտապ բուժօգնության մասնագիտացված ավտոտրանսպորտի և այլ

արտակարգ իրավիճակները կանխարգելող միջոցների) մուտքի արգելում: Ջրային տրանսպորտի և սպորտային ինքնաշարժ միջոցներն օգտագործել լողալու գոտու ջրային սահմանից դուրս, իսկ դեպի ցամաք դրանց մուտքերը նախատեսել լողափերից դուրս՝ հատուկ առանձնացված տեղամասերում:

7) ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպում՝ ավտոմոբիլային ճանապարհներին հարակից հատվածներում: Տրանսպորտի կայանատեղերին կից՝ դեպի լիճ ուղղությամբ նախատեսել սանիտարապաշտպան կանաչ գոտի:

8) լողափի գոտում բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրման արգելում: Բուֆերային գոտում առանձին տարածքային հատվածներ կարող են սահմանազատվել ուղղահայաց կանաչապատմամբ ցանկապատերի (մինչև 1,5 մետր բարձրությամբ) կամ բուսական պատնեշների տեղադրման միջոցով:

9) բացառապես մաքրման կայանների միջոցով կեղտաջրերի մաքրման ապահովում՝ ըստ նորմատիվներով սահմանված չափաքանակների: Ջուգարանների հորերը կոնսերվացնել ախտահանումից և սանիտարական ծառայությունների կողմից ակտավորումից հետո:

10) բազմամյա տնկիների աճեցման, բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծման և կլիմայավարժեցման, վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով բույսերի պաշտպանության քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործման բացառում:

11) սույն որոշման N 2 հավելվածում նշված կահավորման ու սարքավորումների տարրերի տեխնիկական բնութագրերի ապահովում:

Նախատեսվում է ցնցուղարաններից առաջացած կեղտաջրերը հեռացնել ջրաանթափանց հոր: Տեղադրված է 2 հատ 25 խմ ջրաանթափանց հոր (որից նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներով կհեռացվի կոյուղու կոլեկտոր):

Տարածքում տեցադրված է 100 Կվ հզորությամբ ենթակայան ներկայացվել է հատակագծի վրա:

Հիմքերը նախատեսված են բնահողի վրա տեղադրված պողպատե պրոֆիլների վրա, որոնք գրունտի հետ ամրացվում են ամրանային ցցաձողերի միջոցով, այն նպատակով, որ հետագայում, անհրաժեշտության դեպքում, շինությունները հնարավոր լինի տեղաշարժել, կամ տեղափոխել: Կոնստրուկտիվ սխեման՝ բոլոր շինությունների համար ընտրված է , որպես պողպատե պրոֆիլներից կմախքներ: Պատերը նախատեսված են արտաքինից ցեմենտբոթրդե, իսկ ներսի կողմից գիպսաստվարաթղթե ծածկույթներով, որոնց միջև նախատեսված է տեղադրել փրփապլաստե ջերմամեկուսիչ շերտ: Տանիքները նախատեսված է երկթեք և միաթեք, ծածկույթը պրոֆվրաքաշից:

Նախագիծը իրականացված է ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերին և կանոններին համապատասխան:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Տարածքի ընդհանուր մակերեսը – 47000քմ;
2. Գոյություն ունեցող կառույցների ընդհանուր մակերեսը - 872.2քմ;
3. Նոր նախատեսվող ժամանակավոր կառույցների մակերեսը – 335.2 քմ;
4. Կանաչապատ տարածքների ընդհանուր մակերեսը -39281.8քմ;
5. Ասֆալտապատ տարածքների ընդհանուր մակերեսը – 2127քմ ;

- 6.Գրունտային ճանապարհների ընդհանուր մակերեսը – 950քմ;
- 7.Սալիկազլաքարային ճանապարհների ընդհանուր մակերեսը – 147քմ;
- 8.Լողափին կից թեթև կոնստրուկցիաներով հարթակի մակերեսը – 647քմ
- 9. Լողափնյա ավազապատ տարածքների ընդհանուր մակերեսը – 2640 քմ:

1.4.1 Երկրաֆիզիկական ուսումնասիրություններ

«Գեոլիթ» ՍՊ ընկերությանը պատվիրվում է կատարել ՀՀ Գեոարքունիքի մարզ, «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ ՍՊԸ-ի կողմից «Սևան» ազգային պարկից վարձակալած տարածքում նախագծվող հանգստի գոտի-առողջարանային համալիրի տեղամասի ինժեներա-երկրաբանական հետազննական Աշխատանքներ՝ այդ թվում

- Պատվիրատուի կողմից կազմակերպած թվով 7 հորատանցքերի նկարագրում, որոնցից 2-ը՝ 8 մետր, իսկ 5-ը՝ 6 մետր խորություններով:
- Գրունտների նմուշառում և լաբորատոր հետազոտություններ:
- Դաշտային և արխիվային նյութերի հավաքագրում, վերլուծություն և ընդհանրացում:
- Ինժեներաերկրաբանական կտրվածքների կազմում:
- Ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացության կազմում:

Հետազոտվող տարածքը գտնվում է Սևանա լճի հյուսիսային ափամերձ մասում, Արտանիշ գյուղից մոտ 1,6 կմ դեպի հարավ-արևելք հեռավորության վրա և իրենից ներկայացնում է մասամբ կառուցապատված տարածք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղաբաշխված է Սևանի լեռների արևմտյան կողմի հարավային եզրամասային ստորոտային հատվածում: Այն իրենից ներկայացնում է կուտակային՝ լճային նստվածքային հարթավայր, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1900-1912 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքի հիմնական ջրային ավազանն է Սևանա լիճը, հետազոտվող տեղամասը գտնվում է Սևանա լճի հյուսիսային ափամերձ մասում: Բնական է, որ տեղամասը հարուստ է գրունտային ջրերով, որի հորիզոնը կապված հետազոտվող տեղամասի բացարձակ նիշերից ունի տարբեր խորություններ: Փորված հորատանցքերով գրունտային ջրերի հորիզոնը հատվել է մայն լճի ափամերձ մասում փորված հորատանցքեր թիվ 6 և 7-ում՝ 1,3-1,5 մետր խորություններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա բացակայում են: Եվ քանի որ ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Սևանա լճի ափամերձ մասում՝ առկա է միայն լճի ջրերից ջրողողման և ջրածածկման երևույթները՝ լճի մակարդակից մոտ 0,5-0,8 մետր բարձրությամբ:

Շերտ-1 ճալաքարակոպճային գրունտ կոպիճներով, ավազների պարունակությամբ, սակավ խոնավ, բաց մոխրագույն, միջին խտության, կավավազների 10-25% լցնով: Բեկորային նյութը տարակազմ է, լավ և միջին հղկվածությամբ:

- Շերտն ունի լայն տարածում, իսկ հորատված առավելագույն հզորությունը 8,0 մետր է:
 Չորրորդական ժամանակաշրջանի, վերին պլեյստոցեն դարակարգի լճային նստվածքներ են:
 Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի III կարգ է:
- Շերտ – 2 Ավազներ մոխրագույն, մանրահատիկ, միջին խտության, սակավ խոնավ, իսկ 1,3-1,5 մետրից՝ ջրհագեցած: Շերտը տարածված է Սևանա լճի ափամերձ մասում: Շերտի հորատված հզորությունը 2,1-2,4 մետր է: Ժամանակակից լճային նստվածքներ են:
 Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-ի II կարգ է:
- Շերտ – 3 Կոպճային գրունտ ճալաքարերով, ավազների պարունակությամբ, թաց ջրհագեցած, միջին խտության: Բեկորային նյութը տարակազմ է, լավ ու միջին հղկվածության Շերտը տարածված է Սևանա լճի ափամերձ մասում, իսկ հորատված առավելագույն հզորությունը 4,1 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի, վերին պլեյստոցեն դարակարգի լճային նստվածքներ են:
 Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-5-82-II կարգ է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է Սևանա լճի հյուսիսային ափամերձ մասում, Արտանիշ գյուղից մոտ 1,6 կմ դեպի հարավ-արևելք հեռավորության վրա և իրենից ներկայացնում է մասամբ կառուցապատված տարածք:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1900-1912 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 3 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 3-րդ և 4-րդ գլուխներում:
- Տեղամասում ինչև 8 մետր խորությամբ փորված հորատանցքերով գրունտային ջրերի հորիզոնը հատվել է մայն լճի ափամերձ մասում փորված հորատանցքեր թիվ 6 և 7-ում՝ 1,3-1,5 մետր խորություններում:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 1,14 մետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են, սակայն Սևանա լճի ափամերձ մասում՝ հնարավոր է միայն լճի ջրերից ջրողողման և ջրածածկման երևույթներ՝ լճի մակարդակից մոտ 0,5-0,8 մետր բարձրությամբ:
- Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի հետազոտվող տեղամասը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, գրունտի սպասվող առավելագույն սեյսմիկ արագացումները կազմում են 0,4g:
- Նախագծվող կառույցների համար որպես հիմնատակի գրունտներ առաջարկվում է շերտ 1-ի (ճալաքարային գրունտ կոպիճով), շերտ 2-ի (ավազներ մոխրագույն) և շերտ 3-ի (կոպճային գրունտ ճալաքարերով) գրունտները:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան եզրակացության տրամադրումը (ԱԿՏ) պարտադիր է:

Ինժեներ-երկրաբան՝

Ա. Թորոյան

1.5 Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծ



1.6 Ջրամատակարարում, կոյուղի ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի խորքային հորից (Ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է ՇՄ նախարարություն): Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով կհեռացվեն նախագծվող արտաքին ցանց, որտեղից կուղղվեն մաքրման կայան:

ԿՈՅՈՒՂԻ

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով ուղղվում են դեպի մաքրման կայան: Ներքին և արտաքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից: Կոյուղաջրերի մազրման համար նախատեսվում է ռուսական արտադրության 2 հատ «Топаз» բիոլոգիական մաքրման կայան, որը մեկը ունի 50խմ, մյուսը 5խմ արտադրողականություն:

1.6.1 Նյութերի և բնատեսուրանների օգտագործում

Հանգստի գոտու կառուցման ժամանակ կիրականացվեն փոքր ծավալով հողային աշխատանքներ : Աշխատանքները կտևեն մոտ 2 ամիս: Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնատեսուրաններից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma.i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – աշխատողների թվաքանակն է՝ 8 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 270 օր

$$W_{\Sigma.տ.} = (2 \times 0.016 + 8 \times 0.025) \times 270 = 62,64 \text{ խմ/շին. ժամ.}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 270

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 270 = 405 \text{ խմ/շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 468 խմ/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով:

ԻՏԱ և բանվորական անձնակազմը կոմիունալ-կենցաղային կարիքները կհոգան շինհրապարակում ժամանակավոր նախատեսվող բիոզուգարաններից, որոնք շինաշխատանքների ավարտին կապամոնտաժվեն:

1.6.2 Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ տեղի են ունենալու առաջարկվող աշխատանքային նախագծի իրականացման կառուցման փուլերում: Տվյալ արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութեր, մասնավորապես խոսքը գնում է փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումների մասին:

Փոշու արտանետումները կառաջանան շինարարության աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա: Հողային աշխատանքների արդյունքում գոյացող փոշին կարող է ազդել մթնոլորտային օդի որակի վրա, մասնավորապես, շինարարության սկզբնական փուլերում: Որոշ փոշի կարող է առաջանալ քամիների ժամանակ պահեստավորված շինանյութի տեղաշարժմամբ և շինարարական հրապարակի մոտակայքում մեքենաների շարժի ժամանակ: Հարկ է նշել, որ այս ազդեցությունները տեղի կունենան շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն կլինեն կարճաժամկետ ուստի, փոշեգոյացման ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կառուցապատման ժամանակ ունի չափավոր բացասական նշանակություն: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները անխուսափելիորեն որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել:

Գնահատման հաշվետվությունում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները:

1.7 Շահագործման փուլ

1.7.1 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ

Խմելու տնտեսական կարիքների համար խմելու որակի ջրի հաշվարկը կատարվում է՝

$$W_{\text{խմ.տնտ.}} = n \cdot N \cdot T$$

n - 1 հանգստացողի համար ջրի ծախսի նորման է՝ 200 լ,
 N - հանգստացողների քանակը՝ 130 մարդ,
 T – հանրային լողափի աշխատելու ժամկետը՝ 60 օր:

$$W = n \times N \times T = 200 \times 130 \times 60/1000 = 1560 \text{ խմ/տարի:}$$

Օգտագործման ընթացքում ջրի անվերադարձ կորուստը կազմում է $\approx 12 \%$:
 $W_{\text{կոր.}} = 1560 - 187 = 1373 \text{ խմ/տարի կամ } 23 \text{ խմ/օր}$

Կենսաբանական մաքրման կայան ուղղվող հոսքաջրերի քանակը կկազմի՝ 23 խմ/օր կամ 1560 խմ/տարի:

Հաշվարկը իրականացված է լողափի առավելագույն զբաղվածության ցուցանիշներով:

Հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի տարածքում նախատեսվող խորքային հորից (Ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով համապատասխան փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է ՇՄ նախարարություն):

1.7.2 Ոռոգման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը

Ջրի ծախսը 1 քառ.մ կանաչ տարածքի ջրման համար՝ n
 n_1 ՝ գազոններ - 3 լ

Կանաչ տարածք (S)՝ 39282 քմ ,

ջրման օրերի թիվը տարվա կտրվածքով (N)՝ 45 օր:

Ջրապահանջը կկազմի՝

$$W_{nn. \text{ ջր}} = (n_1 \times S_1) \times K = (3 \times 39282) \times 45 / 1000 = 5303 \text{ խմ/տարի:}$$

Ոռոգման ջրջանման համար ջուրն ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ:

1.7.3 Մաքրման կայան

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել 2 հատ կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը: Հանգստի գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կուլեկտոր չկա:

Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջրերը համապատասխանում են ձկնատնտեսական ջրամբարների նորմերին և համապատասխան վնասազերծումից հետո կարող են օգտագործել նաև ոռոգման նպատակով:

Հարկ է նշել, որ ոռոգման շրջանում մաքրված ջրերը օգտագործվելու են միայն ոռոգման նպատակով:

Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում կեղտաջրերի առավելագույն օրական ծավալը նախատեսվում է 23 խմ/օր, որը ամբողջությամբ կօգտագործվի ոռոգման նպատակով:

Նմանատիպ տեխնիկական ցուցանիշներով կայան է հանդիսանում Топаето տեսակի մոդուլային կենսաբանական մաքրման կայանը, սակայն պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է տեղադրել նաև նմանատիպ կամ ավելի լավ ցուցանիշներով մաքրման կայան: Մաքրման կայանը լիովին համապատասխանում է հանգստի գոտու գոտու հանգստացողների առավելագույն քանակին՝ 130 մարդ: Առաջարկվող մաքրման կայանների արտադրողականությունը ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 50 խմ/օր և 5 խմ/օր, որը նաև հաշվի է առնվել որոշակի հավելումով:

Մաքրման կայանի տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա:

Կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանը ապահովում է մաքրման այնպիսի աստիճան, որը նախատեսված է Մակերեսային ջրերը աղտոտումից պահպանելու սանիտարական նորմերով և կանոններով (ГОСТ 25298-82) և ՇՆ և Կ-40-03-99 ու ՇՆ և Կ 2.04.03-85 «Ջրահեռացում Արտաքին ցանցեր և կառույցներ»:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ–4859–002–54899623–2003 պահանջներին: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ,

պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից, որն ապահովում է դրանց աշխատանքի երկարակեցությունը:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Ճամբարակ խոշորացված համայնքի Արտանիշ վարչական շրջանի ավամերձ տարածքում:

Տարածքում գործում է հանգստի գոտի: Գոյություն ունեն ծառեր, ինչպես նաև թփեր:

Լողափին մոտեցող ճանապարհները արդեն գոյություն ունեն և իրենցից ներկայացնում են գրունտապատ ճանապարհներ, նոր ճանապարհներ չեն նախատեսվում:

Սևանի ավազանի ավամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ավսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հասակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

- Արգելոցային,
- Արգելավայրային,
- Ռեկրեացիոն,
- Տնտեսական:

2.2 Հատուկ պահպանվող տարածքներ

Ինչպես նշվել է, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Արտանիշ գյուղի տարածքում, որը տեղակայված է "Սևան" ազգային պարկի սահմաններում: Պարկը գտնվում է հայկական հրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ "Նորաշենի", "Լիճք-Արգիշի", "Գիլլի" և "Արտանիշի", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ "Գավառագետի" և "Գիհի-կաղնուտային ռելիկտային", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

2.3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ ճամբարակ համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ ճամբարակ համայնքում հաշվառված բնակչության թվաքանակը կազմել է 5800 մարդ, իսկ Արտանիշ համայնքում՝ 756 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), ճամբարակ համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,2 մգ/խմ, ածխածնի օքսիդ՝ 0,4 մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/խմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/խմ:

Աղ. 3 Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

2.4 Ջրագրություն

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:

Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ²: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը:

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանակառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով:

Երկրաբանա-հիդրոերկրաբանական և երկրաֆիզիկական տեսանկյունից՝ Սևանի ավազանի տարբեր տեղամասեր ունեն ինքնատիպ երկրաբանական կառուցվածք և դրա հետ կապված տարբեր հիդրոերկրաբանական պայմաններ: Այդ տարբերությունները հիմնականում արտահայտվում են երկրաբանական կառուցվածքով, լիթոլոգիական կազմով, ծագմամբ, նստվածքառաջացման պայմաններով և առանձին տեղամասերի գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Դրա շնորհիվ, որոշ տեղամասերում տարածված են միայն գրունտային ջրեր, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացիաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան ստորգետնյա գրունտային ջրեր, որոնք կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ինչպես նաև չորորդական հասակի լճային նստվածքների հետ: Ստորգետնյա գրունտային ջրերը գտնվում են 100մ-ից խորը հորիզոններում: Տարածաշրջանի մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ:

2.4.1 Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր. Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Չկնազետ	Ծովագրուղ	0.59	0.33	179	0.28	0.36	79	0.24	0.24	100
Մասրիկ	Ծովակ	2.24	2.98	75	2.22	2.88	77	2.23	2.66	84
Մարտունի	Գեղհովիտ	0.73	0.79	92	0.71	0.82	87	0.69	0.71	97
Արգիճի	Վ.Գետաշեն	2.81	2.33	120	2.84	2.47	115	2.53	2.38	106
Գավառազետ	Նորատուս	3.29	2.93	112	3.11	3.01	103	2.98	2.99	100

2.4.2 Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում: Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2022թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Չկնազետ գետի ջրի որակը Սենյոնովկա գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառազետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները.






2.4.3 Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 դիտակետում՝ 7 բնադրյալում, 7 շատրվանոց և 1 չշատրվանոց հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 8 դիտակետերից կատարվել են նմուշառումներ քիմիական անալիզների համար:

Բոլոր դիտակետերում ծախսերի տատանումները աննշան են և կրում են բնական բնույթ: Աննշան փոփոխություններ են նկատվում նաև ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության արժեքներում:





2.4.4 Սևանա լիճ

2021 թվականի 4-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 10. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2021 թվականի 4-րդ եռամսյակում Հոկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Շնդամներ (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	12.67	12.62	13.70	38.99	20.7	38.0	57.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.54	2.80	2.64	7.98	0.00	7.89	18.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	27.4	2.30	5.90	35.6	6.30	43.2	112.3
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.60	12.5
Շնդամներ	45.21	20.32	24.94	90.47	56.6	91.0	166.9
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	22.5	155.9
Գոլորշացում լճի մակերևույթից	52.0	45.2	43.2	140.4	102.0	145.9	178.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Շնդամներ	52.40	45.60	43.60	141.6	123.1	176.6	300.2
Կուտակում (նվազում)	-12.7	-12.8	-12.7	-38.2	-205.4	-92.2	2.60
Բացարձակ անկայք	5.51	-12.48	-5.96	-12.93		6.70	
Հարաբերական անկայք %	9.51	27.4	13.7	9.13	0.10	5.90	25.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.54	1278.891	38.2277
Ամսվա վերջին օրը	1900.51	1278.606	38.1895
Միջին ամսական	1900.53	1278.796	38.2150

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.07 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.07.21 ընթացքում 0.20 (մ)
 31.07.21 և 31.07.20 մակարդակի տարբերությունը -0.03մ

2021 թվականի հոկտեմբերի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.54մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 10սմ-ով: 2021 թվականի հոկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.51մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 9սմ-ով, նոյեմբերի 30-ին՝ 1900.47մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 7սմ-ով, իսկ դեկտեմբերի 31-ին կազմել է 1900.43մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 9սմ-ով: 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը լճի մակարդակը իջել է 11 սմ-ով:


Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը հոկտեմբեր ամսին կազմել է 7.978 մլն մ³, նոյեմբերին՝ 2.889 մլն մ³, դեկտեմբերին՝ 5.967 մլն մ³:


2021 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.891 կմ², ծավալը՝ 38.2277 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար՝ 1277.845 կմ² և 38.0875 կմ³:

Սևանա լճից ռոռզման նպատակով ջրի բաց թողումը դադարեցվել է սեպտեմբերի 28-ին և գումարային բաց թողումը կազմում է 227.651 մլն.լիմ:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (Աղյուսակ 11):

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.







Աղյուսակ 11. Սևանա լճի ջրի որակը 2021 թվականի 4-րդ եռամսյակում
Հոկտեմբեր



Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	Լուծված թթվածին, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	2-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 20մ խորություն	ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բարիում	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	

ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ◆ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

2.5 Հողային ռեսուրսներ

"Սևան" ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ:

Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրոբելիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացածավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: "Սևան" ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

2.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման չորային է: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ: Ձմեռային եղանակային ռեժիմը ձևավորում է մթնոլորտի յուրովի թթվածնային ռեժիմ, դիտվում են թթվածնի կշիռային պարունակության մաքսիմում արժեքներ, որոնք աստիճանաբար նվազում են ըստ բարձրության: Ձմռան սեզոնում լիճը ծածկվում է սառույցով, և լճի ջրային ավազանի ազդեցությունը ավիամերձ ցամաքի թերմիկ ռեժիմի վրա զգալի նվազում է: Ամռանը գերակշռում է "արևոտ չափավոր խոնավ" եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Տարածաշրջանը լանդշաֆտային, եղանակա-կլիմայական, միկրոկլիմայական պայմաններով շահավետորեն տարբերվում է մյուսներից: Տարածքը բաց է և չի էկրանավորվում բարձր լեռնազանգվածներով: Տարվա ընթացքում տարածաշրջանում դիտվում է արևափայլի մեծ տևողություն (2747 ժամ), ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների տարեկան դրական բալանս:

2.6.1 Ջերմաստիճանը

Թերմիկ ռեժիմը բավականին բարենպաստ է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 5.30C, ամենատաք ամսվանը 15.90C (օգոստոս), ամենասառը ամսվանը՝ -5.50C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -330C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 330C:

Աղյուսակ 6. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, օC

Բնակավայրի օրերնութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Չունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Սևան լճային (ԼՃ.)	1917	-5.5	-5.3	-1.9	3.5	8.4	12.4	15.7	15.9	12.8	8	2.5	-2.8	5.3	-33	33

2.6.2 Խոնավությունը

Տարածաշրջանում հարաբերական խոնավությունը առավելագույն ժամերին 62 % է, իսկ ցերեկը հասնում է 55%-ի: Միջին խոնավության ցուցանիշները տատանվում են 68-75% միջակայքում:

Տարեկան միջին արժեքը 72%: Ձմռանը քամիները հիմնականում ուղղված են դեպի լճի կենտրոնը, որի հետևանքով խոնավությունը հեռացվում է ավիամերձ գոտուց:

Աղյուսակ 7. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օրերնութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների											Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Չունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Սևան լճային (ԼՃ.)	74	75	74	71	74	73	73	73	69	68	71	74	72	67	63

2.6.3 Մթնոլորտային տեղումները

Տարածաշրջանում տարվա տաք կեսին դիտվում են 349 մմ տեղումներ, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 484 մմ: Չյան ծածկույթը սկսում է ձևավորվել նոյեմբերի երրորդ տասնօրյակից, իսկ 2000 մ-ից բարձր Գեղամա լեռների հյուսիս-սային լանջերին՝ հոկտեմբերի երկրորդ կեսից: Հաստատուն և կայուն ձյան ծածկույթը ձևավորվում է դեկտեմբերին, որի միջին բարձրությունը հունվար-փետրվար ամիսներին հասնում է 25-35 սմ-ի, իսկ ավիամերձ գոտում 10-20 սմ-ի:

Աղյուսակ 8. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օրերնութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը												Ձևածածկույթ			
	միջին ամսական օրական առավելագույն , մմ											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ	Ձյան մեջ ծածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ չոր առավելագույն քանակը, մմ	
	Չունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր
Սևան լճային (ԼՃ.)	14	19	28	53	87	76	49	37	33	43	29	16	484	71	121	-
	13	24	33	29	38	51	56	55	35	55	31	16	56			

2.6.4 Քամի

1	2	3	Կրկնելիությունը, %								12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում						
			Միջին արագությունը, ըստ ուղղությունների մ/վ												Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	20	50	100
			4	5	6	7	8	9	10	11									16	17	18
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28				
		ապրիլ	4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7								20	3,3		
		հուլիս	5	9	23	8	4	16	28	7	17	3,1									
		հոկտեմբեր	3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4					33	2,7					
			18	35	31	6	3	2	3	2											
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8											
			7	5	7	3	4	15	45	14											
			4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7											

2.6.5 Արեգակնային ճառագայթումը

1	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ ²												
	ըստ ամիսների												Տարեկան գումարային
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	
Սևան	356	453	700	818	987	978	995	917	695	547	375	311	8133

2.6.6 Արևափայլի տնտրությունը

Աղյուսակ 10

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տնտրությունը ըստ ամիսների, ժամ											Տարեկան գումարային	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևանա լճ.	148	148	178	185	245	294	324	311	267	229	161	139	2629

2.6.7 Անարև օրերի քանակը

Աղյուսակ 11

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների											Տարեկան	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևանա լճ.	3	2	2	2	0,4	0,1	0,1	0,1	0,5	1	2	3	16

2.6.8 Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ

Աղյուսակ 12

Աշխարհագրական լայնություն, աստ. հս. լ.	Բարձրությունը ըստ ամիսների. աստիճան											
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
38	30,8	39,2	49,8	61,7	70,8	75,3	73,6	66,2	55,1	43,6	33,6	28,7
40	28,8	37,2	47,8	59,7	68,8	73,3	71,6	64,2	53,1	41,6	31,6	26,7
42	26,8	35,2	45,8	57,7	66,8	71,3	69,6	62,2	51,1	39,6	29,6	24,7

2.7 Կենսաբազմազանություն

2.7.1 Բուսական աշխարհ

Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում տափաստանային է, տափաստաններին բնորոշ բուսականություն հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխր ագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկ (*Hypholoma fasciculare*), ճանճասպան հովազային (*Amanita pantherina*), շամպինյոն 1411 դեղնամաշկ (*Agaricus xanthodermus*), գոմաղբասունկ թեփուկավոր (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկեր (*Cortinarius*), թելիկասնկեր (*Inocybe*), շարքասնկեր (*Tricholoma*) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովող թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 9 -ում: Աղյուսակում ընդգրկված բույսերի որոշ տեսակները ներկայացված են Նկար 8 -ում:

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
1	Ազնվամորի	Rubus idaeus
2	Աղվեսագի եղեգանման	Alopecurus arundinaceus
3	Անթառամ ոսկեգույն	Helichrysum callichrysum
4	Ասպիրակ աղեղնեզր	Spiraea crenata
5	Արոսենի սովորական	Sorbus aucuparia
6	Գառան դմակ մեծ	Sedum telephium
7	Գերիմաստի	Viburnum lantana
8	Դաշտավունկ սոխուկակիր	Poa bulbosa
9	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica
10	Եղինջ երկտուն	Urtica dioica
11	Թրաշուշան կովկասյան	Gladiolus caucasicus
12	Լավատեր թուրինգիական	Lavatera turingiaca
13	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
14	Խատուտիկ Ստեվենի	Taraxacum stevenii
15	Ճորենի սովորական	Berberis vulgaris
16	Կակաչ արևելյան	Papaver orientale
17	Կակաչ հայկական	Papaver armeniacum
18	Կակաչ սակավատերև	Papaver paucifoliatum
19	Կատվադաղձ մերկ	Nepeta nuda
20	Կատվադաղձ Մուսինի	Nepeta mussini
21	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
22	Հագարատերևուկ սովորական	Achillea millefolium
23	Հիրիկ փոքր	Iris pumila
24	Մատիտեղ ճնճղուկի	Polygonum aviculara
25	Մատուռնի ուղիղ	Potentilla recta
26	Նեղտերևի	Chamaenerium angustifolium
27	Շուշանաբանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
28	Շուշանաբանջար ոսկեգոծ	Chaerophyllum aureum
29	Պտեր արական	Dryopteris filix mas
30	Սեզ սպիտակ	Agrostis alba
31	Սիզախոտ մարգագետնային	Phleum pratense
32	Սրոհունդ ալպիական	Hypericum alpestre

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
33	Սրոհունդ խոցված	Hypericum perforatum
34	Սրոհունդ մշտիկատերևանման	Hypericum hyssopifolium
35	Մասրենի Հրաչի	Rosa hrachiana
36	Մասրենի առատափուշ	Rosa spinosissima
37	Վիկ մկան	Vicia cracca
38	Տանձենի կովկասյան	Pyrus caucasica
39	Տուղտավարդ թավրիզյան	Alcea tabrisiana
40	Փրփրուկ վեցաթերթ	Filipendula hexapetala
41	Օշինդր արևելյան	Artemisia orientalis
42	Օշինդր դառը	Artemisia absinthium

Նկար 8. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները



Տուղտավարդ թավրիզյան - Alcea tabrisiana



Սրիռունդ մշտիկատերևանման - Hypericum hyssopifolium



Վիկ մկան - Vicia cracca



Լավատեր թուրինգիական - Lavatera turingiaca



Միզախոտ մարգագետնային - Phleum pratense



Փրփրունկ վեցաթերթ - Filipendula hexapetala



Մատիտեղ ճնճղուկի - Polygonum aviculare



Ասպիրակ աղեղնեղ - Spiraea crenata



Կակաչ արևելյան - *Papaver orientale*



Կատվարաղձ Մուսիկի - *Nepeta mussini*

Տարածաշրջանում լայն տարածում ունեն Ազնվամորու (*Rubus idaeus*), Վարդ առատափուշի (*Rosa spinosissima*), Մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և Ասպիրակ աղեղնեզրի (*Spiraea crenata*) մացառուտները, որոնց արանքներում հանդիպում են Ծորենի սովորականը (*Berberis vulgaris*) և Լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Արոսենի սովորական (*Sorbus aucuparia*) և Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*) ծառեր: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու

անտառների հիմնական խմբավորումները: Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 10- ում:

Աղյուսակ 10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Չայերեն	Լատիներեն	
1	Անողնուցուկ Գրոսիեյմի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz.	EN
2	Արոսենի հայաստանյան	<i>Sorbus hajastana</i> Gabr.	VU

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում Դրախտիկ գյուղի ափամերձ հատվածում : Թերակղզու այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հանդիպել: Տարածքում անտառաշերտը հիմնականում ներկայացված է փշատերև ծառերով եղևնի, սոճի և այլն(նշված հատվածում աշխատանքեր չեն նախատեսվում):

2.7.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականի լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ, ինչպես նաև մի քանի կարմիրգրքային տեսակներով: Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Տարածաշրջանում ամենատարածված և բազմաքանակ կենդանիներն են մկնանման կրծողները և մանր թռչնատեսակներ, որոնք հանդիսանում են գիշատիչ թռչունների և կենդանիների, այդ թվում կարմիրգրքային կենդանատեսակներից

որոշների համար որպես կերային օբյեկտներ: Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 11-ում: Աղյուսակում ընդգրկված կենդանիների որոշ տեսակները ներկայացված են Նկար 10-ում:

Աղյուսակ 11. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	<i>Columba livia</i>
2	Ժուլան	<i>Lanius collurio</i>
3	Լոր	<i>Coturnix coturnix</i>
4	Խայտաբղետ քարակեռնեխ	<i>Monticola saxatilis</i>
5	Յոպոպ	<i>Upupa epops</i>
6	Մեծ ճուռակ	<i>Buteo buteo</i>
7	Մոխրագույն ագռավ	<i>Corvus corone</i>
8	Մոխրագույն արտույտ	<i>Calandrella rufescens</i>
9	Մոխրագույն կաքավ	<i>Perdix perdix</i>
10	Ոսկեգույն մեղվակեր	<i>Merops apiaster</i>
11	Պարող քարաթռչնակ	<i>Oenanthe isabellina</i>
12	Զրածիծառների տեսակներ	<i>Chlidonias</i>
13	Սև կեռնեխ	<i>Turdus merula</i>
14	Սևաճակատ շամփրուկ	<i>Lanius minor</i>
15	Սևավիզ քարաթռչնակ	<i>Oenanthe finschii</i>
16	Սովորական կաչաղակ	<i>Pica pica</i>
17	Սովորական հողմավար բազե	<i>Falco tinnunculus</i>
18	Սովորական ճայ	<i>Corvus monedula</i>
19	Սովորական որոր	<i>Larus ridibundus</i>
20	Սովորական սարյակ	<i>Sturnus vulgaris</i>
21	Սովորական սիտեղ	<i>Sitta europaea</i>
22	Սովորական քարաթռչնակ	<i>Oenanthe oenanthe</i>
23	Տափաստանային արտույտ	<i>Melanocorypha calandra</i>
24	Փուփուկավոր արտույտ	<i>Galerida cristata</i>
25	Աղվես	<i>Vulpes vulpes</i>
26	Աքիս	<i>Mustela nivalis</i>
27	Գորշուկ/ Փորսուղ	<i>Meles meles</i>
28	Դաշտամկներ	<i>Microtinae</i>
29	Յամստեր	<i>Cricetus cricetus</i>
30	Ձյան դաշտամուկ	<i>Chionomys nivalis</i>
31	Նապաստակ	<i>Lepus europaeus</i>
32	Գայլ	<i>Canis lupus</i>
33	Շնագայլ	<i>Canis aureus</i>
34	Քարակզաքիս	<i>Martes foina</i>

Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները



Լոր - *Coturnix coturnix*



Մոխրագույն ագռավ - *Corvus corone*



Թխակապույտ աղավնի - *Columba livia*



Սովորական հողմավար բազե - *Falco tinnunculus*



Չուպուպ - *Upupa epops*



Սովորական սիտեղ - *Sitta europaea*



Ալփա - *Mustela nivalis*



Դաշտամկներ - *Microtinae*



Նապաստակ - *Lepus europaeus*



Չամստեր - *Cricetus cricetus*

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված 5 կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 12-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 12. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Չայերեն	Լատիներեն	
1	Չարթ խխունջ	<i>Gyraulus laevis</i>	EN
2	Մոխրաայտ սուզակ	<i>Podiceps grisegena</i> Boddaert	VU
3	Թշշան կարապ	<i>Cygnus olo</i>	VU
4	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
5	Խայտաբաղ	<i>Tadorna tadorna</i>	VU
6	Լայնակտուց բաղ	<i>Anas clypeata</i> Linnaeus	VU
7	Սպիտակաճակատ սագ	<i>Anser albifrons</i>	VU

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Չայերեն	Լատիներեն	
8	Կարմիր ցին	<i>Milvus milvus</i>	EN
9	Սպիտակապոչ արծիվ	<i>Haliaeetus albicilla</i> Linnaeus	EN
10	Գիշանգղ	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	EN
11	Տափաստանային արծիվ	<i>Aquila nipalensis orientalis</i> Hodgson	VU
12	Սղավնաբազե	<i>Falco columbarius</i> Linnaeus	DD
13	Սապսան	<i>Falco peregrinus</i> Tunstall	VU
14	Չայկական որոր	<i>Larus armenicus</i> Buturlin	VU
15	Ներկարար	<i>Coracias garrulus</i>	VU

EN (Endangered) - վտանգված տեսակ

VU (Vulnerable) - խոցելի տեսակ

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում՝ ափամերձ հատվածում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հանդիպել:

2.8 Պատմամշակութային և բնության հուշարձանները

Գեղարքունիքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գործառույթներն առավել զարգացնելու համար: Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:

ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 9-ին թիվ 80-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի համաձայն :

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում:

Աղյուսակ 13. համայնքի պատմամշակութային հուշարձանները

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Գլխատուն	19 դ.	կառուցել է Սարգիս Մանուկյանը
Գլխատուն	19 դ.	Վարազդատ Պողոսյանի տան մոտ
Գլխատուն	19 դ.	Անդրանիկ Մելիքյանի տան մոտ
Գյուղատեղի Գանձավանք («Անգիր վանք»)	9-17 դդ.	Սևան-Գավառ ճանապարհի ձախ կողմում
Եկեղեցի Գանձավանք («Անգիր վանք»)	9-10 դդ.	գյուղատեղիի աե կողմում, կիսավեր
Դամբարանադաշտ «Գեղունի»	մ.թ.ա. 3-2 հզ	Սևանա լճի հս-ամ ափին
Դամբարանադաշտ Լճաշենի	մ.թ.ա. 2-1 հզ	Սևան-Գավառ հին ճանապարհի ձախ կողմում
Եկեղեցի Սբ. Հռիփսիմե	7 դ.	
Խաչքար	10-11 դդ.	ազուցված հվ պատին, արտաքուստ
Խաչքար	11-12 դդ.	ազուցված ամ պատին, արտաքուստ
Խաչքար	13 դ.	եկեղեցու ներսում
Խաչքար	14-15 դդ.	բեմի ճակատինն, ձախից 1-ինը
Խաչքար	15 դ.	բեմի ճակատին, աջից 3-րդը
Խաչքար	15 դ.	ազուցված հվ պատին, մուտքից ձախ, արտաքուստ, արձանագիր

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Խաչքար	15-16 դդ.	ագուցված ամ պատին, արտաքուստ, արձանագիր
Խաչքար Քիրմանի	15-16 դդ.	իվ ավանդատանը
Խաչքար	1557 թ.	բեմի ճակատին, աջից 5-րդը, թվակիր
Խաչքար Քիրմանի	1561 թ.	բեմի ճակատին, աջից 4-րդը
Խաչքար	16 դ.	ագուցված մուտքից ձախ, բեկոր, արձանագիր
Տապանաքար	17-18 դդ.	հենած բեմի ճակատին
Տապանաքար Սահակի	1707 թ.	ավանդատանը, պահպանվել է 2 բեկորով
Գերեզմանոց	10-20 դդ.	եկեղեցու շուրջը
Խաչքար	10 դ.	եկեղեցուց հս, հենած տապանաքարին
Խաչքար	13-14 դդ.	եկեղեցուց հս-աե, դրված հորիզոնական դիրքով որպես տապանաքար
Խաչքար Վարդանի	15 դ.	ընկած գետնին
Խաչքար	16 դ.	ընկած գետնին, արձանագիր
Տապանաքար	15-16 դդ.	եկեղեցուց 2 մ հս
Տապանաքար Նուրբեկի	1594 թ.	
Տապանաքար	16 դ.	եկեղեցու իվ պատի մոտ, արձանագիր, կոտրված
Տապանաքար	16-17 դդ.	եկեղեցուց 1 մ հս
Տապանաքար	16-17 դդ.	եկեղեցուց ամ
Տապանաքար	16-17 դդ.	
Տապանաքար Հովսեփի	16-17 դդ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Սարգսի	1668 թ.	եկեղեցուց հս
Տապանաքար Թուխձամի	1686 թ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար պարոն Գրիգորի	1696 թ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Փարու	17 դ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար	17 դ.	եկեղեցուց հս-աե, արձանագիր
Տապանաքար Մելքումի	1701 թ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Բեկիջանի	1702 թ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար պարոն Գասպարի	1703 թ.	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Ղազարի	1705 թ.	
Տապանաքար Ղազարի	1707 թ.	եկեղեցուց հս-ամ

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Տապանաքար	1737 թ.	եկեղեցուց ամ, արձանագիր
Տապանաքար Ամիրի	1746 թ.	եկեղեցուց հս-աե
Խաչքար	9-10 դդ.	Վաղո Մանուկյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում, բեմին
Խաչքար	10 դ.	բարձունքի վրա, հենած ժայռաբեկորի
Խաչքար	16 դ.	կանգնեցված գետնին, Երկրորդ աշխարհամարտում զոհված մարտիկների հուշարձանի մոտ
Խաչքար	16-17 դդ.	Մուրադ Կարապետյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		
Մատուռ Սբ. Գևորգ	վրկնգ՝ 1911 թ.	
Խաչքար	9-10 դդ.	ագուցված հվ պատին, ներքուստ, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	9-10 դդ.	բեմին, 6 խաչքարերից ձախից 1-ինը, վերնամասը՝ չի պահպանվել
Խաչքար	998 թ.	բեմին, 6 խաչքարերից ձախից 2-րդը պատվիրատու՝ Գրիգոր
Խաչքար	10 դ.	գլխիվայր ագուցված հվ պատին, ներքուստ, ջարդոտված
Խաչքար	10-11 դդ.	հենած հս պատին, ստորին ձախ անկյունը՝ կոտրված
Խաչքար	10-11 դդ.	բեմին, 6 խաչքարերից աջից 1-ինը
Խաչքար	11 դ.	բեմին, 6 խաչքարերից աջից 3-րդը
Խաչքար	12-13 դդ.	ագուցված հվ պատին, ներքուստ
Խաչքար	12-13 դդ.	բեմին, 6 խաչքարերից աջից 2-րդը
Խաչքար	12-13 դդ.	բեմին, 6 խաչքարերից ձախից 3-րդը
Խաչքար	14-15 դդ.	հենած հս պատին, մուտքի մոտ
Գերեզմանոց	9-15 դդ.	մատուռի շուրջը, նեղ ճանապարհով բաժանվում է 2 հատվածների
Խաչքար	12 դ.	պատվանդանին
Խաչքար	12-13 դդ.	մատուռի աե պատի մոտ, կանգնեցված գետնին
Խաչքար	13-14 դդ.	եզրերը՝ վնասված
Խաչքար	14-15 դդ.	կերտված ժայռաբեկորին
Մատուռ Թուխ Մանուկ	19-20 դդ.	գործող գերեզմանոցի տարածքում

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Խաչքար		մատուռի ներսում, եռատված
Վանական համալիր «Կարմիր վանք»	9-20 դդ.	գյուղի եզրին, գերեզմանոցի հին թաղումների տարածքում
Եկեղեցի	9-10 դդ.	1-ին եկեղեցի, ավերված
Գավիթ	10-12 դդ.	ավերված
Եկեղեցի	մջնդ	2-րդ եկեղեցի, ավերված
Խաչքար	11-12 դդ.	տեղահանված
Մատուռ	19 դ.	
Խաչքար	9-10 դդ.	մատուռի բեմին
Խաչքար	13 դ.	մատուռի բեմին
Գերեզմանոց	9-20 դդ.	մատուռի շուրջը
Խաչքար	9-10 դդ.	հենած քարաբեկորին
Խաչքար	964 թ.	պատվանդանին պատվիրատու՝ Գրիգոր Բարակավիզ
Վիմագրություն. Արգիշտի Ա-ի արձանագրությունը	մ.թ.ա. 776 թ.	պահպանվում է ուղղանկյուն կառույցի ներսում, փոստի շենքի մոտ

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն:

Աղյուսակ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները

21.	«Մեկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
22	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
23	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
27	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
28	«Թառ (Կարմիր Կատար)»	Գեղարքունիքի մարզ, Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ հրաբխից հարավ-արևմուտք, Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով:

Երկրաբանական հուշարձաններ

21.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
22.	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
23.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26.	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
27.	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

5.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
7.	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
8.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
9.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
10.	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Մարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

13.	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
-----	------------	---

Կենսաբանական հուշարձաններ

4.	«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
----	------------------------	---------------------------------------

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրոյթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն տարածքում տեղադրված 5մ³ ծավալով պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կտեղադրվի է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն փայտյա մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:
Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների քանակի պահպանության հիդրոլոգիական և հիդրոմորֆոլոգիական պահանջներն են`
- ռեկրեացիոն գոտիներում գտնվող և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող լճերում չիրականացնել լիճ թափվող գետերից և/կամ բուն լճից այնպիսի ջրառ, կամ հոսք ունեցող լճերի համար ելքի արգելափակում, որոնց արդյունքում կխաթարվի ջրային հաշվեկշիռը, ինչը կհանգեցնի լճի մակարդակի և լճի ջրի թարմացման ժամանակի տևողության փոփոխության.
- ռեկրեացիոն գոտիներում գտնվող և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող լճերում չիրականացնել հատակի նստվածքների կազմի և կառուցվածքի, լողափի և առափնյա լանջի որևէ մորֆոլոգիական փոփոխություններ.
- ռեկրեացիոն գոտիներում գտնվող և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող լճերի հատակին, լողափին, առափնյա լանջին և դրանից առնվազն 20մ հեռավորության գոտում, իսկ Սևանա լճի դեպքում` լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշն ընկած գոտում, չիրականացնել կառուցապատում.
- ռեկրեացիոն գոտիներում լճերի և ստորերկրյա ջրերի միջև հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական կապը չխաթարելու նպատակով արգելվում է ստորերկրյա ջրերի հորատումը և օգտագործումը, ինչպես նաև ստորերկրյա ջրերի դրենաժավորումը:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում` բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
 - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
 - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

3.3.4 Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 2400կգ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 10 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղերը /ծածակագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին, հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը ունի թեքություն հարթակի որոշակի հատված որտեղ էլ կկուտակվի յուղը, որտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
 - բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
 - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
 - իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ հանգստի գոտու շահագործման ժամանակ 2007 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն, 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 534-Ն և 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 09-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 Աղմուկ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏՍԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

3.3.7 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Նոր կառուցվող ճամբարի տարածքները բավականին ուրբանիզացված են: Նախատեսվող ճամբարի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն *ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն)* հիմնադրույթներին համապատասխան:

3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:

4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը,

լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

4. ՄՇԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ճամբարի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հեկյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 930000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	150000	150000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	18x35000	630000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	6x25000	150000
Ամբողջ շինարարության համար		930000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
Հողային ռեսուրսներ	Հողի որակ	<p>(f) Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ</p> <p>(g) Շինարարական նյութերը կտեղադրվեն փայտյա մակերեսի վրա,</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:</p> <p>- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.</p> <p>(i) Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:</p> <p>(j) Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):</p> <p>(k) աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,</p> <p>(l) տարածքը կբարեկարգվի:</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի ժամանակավոր բիոզուգարաններից, որոնք շինաշխատանքների ավարտին կապամոնտաժվեն</p>

		(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:
<p>Հետիոտների ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:
<p>Արտակարգ իրավիճակներ</p>	<p>Հնարավոր վտանգներ</p>	<p>(c) Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:</p> <p>(d) Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:</p> <p>(e) Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</p> <p>(f) Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:</p>
<p>Կենսաբազմազանության մոնիթորինգը</p>	<p>Հնարավոր վտանգներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) Ելակետային տվյալների ստացումը և հավաքագրումը 2) ստացված տվյալների վերլուծությունը, ամփոփումը, կանխատեսումների կազմումը. 3) տվյալների բազայի վարումը և տեղեկատվության տրամադրումը. 4) մոնիթորինգի տվյալների հիման վրա անհրաժեշտ բնապահպանական գործողությունների իրականացման վերաբերյալ որոշումների նախագծերի մշակումը՝ շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովմամբ (տարածքային կառավարման մարմիններ, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, բնօգտագործողներ և այլն):

Պատմամշակութային	Ձեռնարկվող քայլեր	ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «շիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
Կենսաբազմազանություն	Ծառաթփային բուսականության վրա ազդեցություն	<p>Բուսականության պահպանում և կառավարում</p> <p>Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով</p> <p>Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում:</p> <p>Անհրաժեշտ է բացառել տարածքում ծառերի և թփերի հատումը</p>
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	<p>Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում</p> <p>Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ</p>

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում - շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման վայրերում տեղադրել ավագ կամ մանրախիճ: Վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով: - Իրականացնել հողերի որակի մոնիթորինգ 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողային զանգվածը օգտագործվում է տարածքում անհարթությունները հարթելու համար	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Բուսատեսակներ, աճելավայրերի, պոպուլյացիաների վիճակի մոնիթորինգ	"Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների	Շինհրապարակ և հարակից տերածքներ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, Ազգային պարկի վերահսկողու

	բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառահատումները:				թյուն
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ